Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա

2016 թվականի գործունեության

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3
ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 5
ՆՊԱՏԱԿ I. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ 10
ՆՊԱՏԱԿ II. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ 20
ՆՊԱՏԱԿ III. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ 21
ՆՊԱՏԱԿ IV. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐ 24
ՆՊԱՏԱԿ V. ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ 26
ԲՈՒՀԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 28
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 30
ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ 35

ՆԱԽԱԲԱՆ

Հաշվետվությունում ներկայացվում է Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի (այսուհետ՝ ԵԳՊԱ) 2016 թվականին իրականացրած գործունեության և ֆինանսական մուտքերի ու ծախսերի համառոտ հաշվետվությունը:

Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի 2012-2016թթ. ռազմավարական ծրագրի համաձայն ԵԳՊԱ առաքելությունը իր մեջ ներառում է հետևյալ 3 հիմնական ուղղությունները.

- կերպարվեստի, կիրառական արվեստի և դիզայնի ոլորտների համար բարձր որակավորման մասնագետների պատրաստումը,
- ստեղծագործական և գիտական բնույթի հետազոտական կրթական ծրագրերի մշակումն ու իրականացումը,
- հասարակության համախմբմանն ու գեղագիտական ճաշակի բարձրացմանն ուղղված ծառայությունների իրականացումը:

Առաքելությանը համապատասխան՝ 2016 թվականի ԵԳՊԱ-ի գործունեությունը միտված էր առաջընթաց գրանցելու հետևյալ հիմնական ուղղություններով.

- ԵԳՊԱ- ի կառավարման համակարգի բարելավում,
- ԵԳՊԱ-ի մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ) վերանայում, ուսանողակենտրոն ուսուցման որդեգրում՝ ՄԿԾ-ների ուսումնառության վերջնարդյունքային մոտեցման միջոցով,
- ԵԳՊԱ-ի կողմից տրամադրած կրթության միջազգային ճանաչում՝ «Մասնագիտական կրթության որակի ապահովման կենտրոն»-ի (ՀՀ) և «ԱՍԻԻՆ» հավատարմագրման գործակալության (Գերմանիա) համատեղ ինստիտուցիոնալ մակարդակով միջազգային հավատարմագրում,

- Հետազոտության ուղղությունների վերանայում, հստակեցում և հետագա զարգացում,
- Ծառայություն հասարակությանը՝ ցուցահանդեսների և այլ մշակութային միջոցառումների կազմակերպման ու նախապատրաստական և ֆակուլտատիվ դասընթացներ տրամադրելու միջոցով,
- ԵԳՊԱ ուսանողների ուսուցմանը նպաստող միջավայրի բարելավում,
- ԵԳՊԱ-ի միջազգայնացում:

Վերը նշված ուղղությունները զարգացնելու նպատակով 2016 թվականին ԵԳՊԱ-ում մշակվել և մշակման փուլում են գտնվում մի շարք նոր կարգեր և այլ փաստաթղթեր՝ միտված բուհի ռազմավարական և տարեկան պլանավորման, ֆինանսական և նյութական ռեսուրսների բաշխման, մարդկային ռեսուրսների հավաքագրման և մասնագիտական կատարելագործման, էթիկայի կանոնների պահպանման գործընթացների բարելավմանը:

Ընդհանուր առմամբ, 2016 թվականը ԵԳՊԱ-ի համար կարելի է բնութագրել որպես հաջողությունների տարի, քանզի հիմնավոր քայլեր են ձեռնարկվել բազմաբնույթ բարեփոխումներ իրականացնելու համար, ինչպես նաև ակադեմիայի կառավարման նոր մոտեցումների և որակի մշակույթի ձևավորման գործում:

Սույն փաստաթուղթը ներկայացնում է ԵԳՊԱ-ի գործողությունները և ֆինանսական հաշվետվությունը՝ ըստ ԵԳՊԱ 2012-2016թթ. ռազմավարական ծրագրի և ռեկտորի 2013 թվականի ընտրության հայեցակարգում նշված դրույթների:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Արդյունավետ կառավարումը բուհի հաջողությունների կարևորագույն գրավականներից է: Բոլոնիայի գործընթացին անդամակցությամբ պայմանավորված միջազգային մակարդակում ՀՀ կրթությունը տեսանելի դարձնելու ձգտումը անհնար է դարձնում կառավարման հին մոտեցումների կիրառումը: Համալսարանների կառավարման արդիականացումը կրթական բարեփոխումների կայացման կարևոր նախապայմաններից մեկն է: Ինքնավարությունն ի սկզբանե կարևոր դեր է խաղացել Եվրոպայի Համալսարանների Ասոցիացիաի (ԵՀԱ) հռչակագրերում: Առաջնային է համարվում 2001 թվականին ընդունված Սալամանկայի հռչակագիրը: Սալամանկայի հռչակագրով կարևորվեց համալսարանական ինքնավարությանը նպաստող քաղաքականության մշակման անհրաժեշտությունը և առաջարկվեցին դրան ուղղված հետևյալ հիմնական սկզբունքները.

- հաշվետվողականությամբ և թափանցիկությամբ ուղեկցվող համալսարանների ինստիտուցիոնալ ինքնավարություն,
- հասարակական պատասխանատվության վրա հիմնված կրթություն,
- հետազոտական աշխատանքների վրա հիմնված բարձրագույն կրթության խթանում:

Ինստիտուցիոնալ ինքնավարություն ասելով, առաջին հերթին հասկացվում է ակադեմիական, կառավարման և ֆինանսատնտեսական գործունեության ազատականացում: Բուհերին այսօր անհրաժեշտ է ակադեմիական ինքնավարություն՝ իրենց բնականոն գործունեությունը կազմակերպելու համար: Անհրաժեշտ է ունենալ նաև ֆինանսավորման բավարար և կայուն աղբյուրներ, ինչը հնարավոր կդարձնի մրցակցության մեջ մտնել եվրոպական բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ:

Այսօր ՀՀ բարձրագույն կրթության առջև դրված հիմնական խնդիրը՝ Եվրոպական տարածաշրջանում մրցունակ, բարձր որակի մասնագետների պատրաստումն է: Այս խնդրի լուծումը Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայից պահանջում է արդի

լաբորատորիաների և արվեստանոցների, միջազգային և տեղական լայն կապերի ու համագործակցության, կերպարվեստի և դիզայնի ոլորտում արդի զարգացումներին ծանոթ, վերապատրաստված բարձր մակարդակի պրոֆեսորադասախոսական կադրերի առկայություն: Դժվարությունը կայանում է նրանում, որ ակադեմիայի ֆինանսական սահմանափակ միջոցները հնարավորություն չեն տալիս զգալի նախնական ներդրում պահանջող նշված բնագավառներում ապահովել շոշափելի զարգացում և այս խնդրի լուծման համար ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներ են անհրաժեշտ: Միևնույն ժամանակ, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի կազմակերպաիրավական կարգավիճակը հնարավորություն չի ընձեռում ձեռնարկատիրական գործունեություն ծավալել կամ որևիցե այլ ձևով արտաքին ներդրողների ներգրավել:

Նշված և այդ կարգի այլ սահմանափակումները վերացնելու նպատակով քայլեր են ձեռնարկվել ակադեմիայի ՊՈԱԿ կազմակերպաիրավական կարգավիճակը հիմնադրամի վերակազմակերպելու ուղղությամբ.

- 2015 թվականին՝
    1. Հարցը քննարկվել է կառավարման խորհրդի նիստում և ԵԳՊԱ ՊՈԱԿ-ը հիմնադրամի վերակազմավորելու հիմնավորումը և կառավարման խորհրդի արձանագրությունը ուղարկվել են ՀՀ ԿԳՆ:
    2. Մշակվել և ՀՀ ԿԳՆ են ներկայացվել «Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի կանոնադրության նախագիծը, ինչպես նաև հիմնադրամին հատկացվող անշարժ գույքի ցուցակը, որոնք 2015 թվականի դեկտեմբերի դրությամբ ԿԳՆ-ի կողմից դրվել են շրջանառության մեջ՝ դրանցում առաջարկություններ և դիտողություններ կատարելու նպատակով:
- 2016 թվականին՝
    1. Ամփոփելով գերատեսչական մարմիններից ստացված առաջարկությունները և դիտողությունները ՀՀ ԿԳՆ-ն դրանք վերադարձրեց ԵԳՊԱ «Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի կանոնադրության նախագիծը վերջնականացնելու նպատակով:
    2. Կանոնադրության նախագիծը վերամշակվեց և ԿԳՆ-ի կողմից կրկին դրվեց շրջանառության մեջ:

ԵԳՊԱ-ն կարևորագույն քայլեր է ձեռնարկել բուհի կառավարումը արդիականացնելու և այն միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու ուղղությամբ.

Կառավարման և հաշվետվողականության համակարգի բարելավման նպատակով մշակվել և ներդրվել է «ԵԳՊԱ տարեկան գործունեության պլանավորման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման կարգ»-ը: Կարգի ներդրումը զգալիորեն մեծացրեց ակադեմիայի գործունեության արդյունավետությունը, առավել տեսանելի դարձնելով, որ այն ամբողջությամբ ուղղված է ռազմավարական նպատակների իրականացմանը: Հենց այդպիսին պետք է լինի իրական արդյունավետ կառավարման համակարգը: Կարգի ներդրումը կնպաստի ԵԳՊԱ-ում կառավարման և հաշվետվողականության նոր մշակույթի ձևավորմանը:

2016 թվականը երրորդ տարին է, ինչ ԵԳՊԱ-ն համակարգում և իրականացնում է «Կառավարում» դրամաշնորհային եռամյա ծրագիրը, որի շրջանակներում Եվրոպական մի շարք առաջատար բուհերի հետ համագործակցության շնորհիվ արդիականացվում են կառավարման մոտեցումները: Ծրագրի շրջանակներում ԵԳՊԱ-ի Եվրոպական գործընկերներն են.

- Լյուվենի համալսարանը (Բելգիա),
- Բաֆ Սպա համալսարանը (Մեծ Բրիտանիա),
- Կոբլենց-Լանդաուի համալսարանը (Գերմանիա),
- ԱՍԻԻՆ հավատարմագրման գործակալությունը (Գերմանիա)

«Կառավարում» ծրագրի նպատակն է փոփոխություններ իրականացնել բուհի կառավարման երեք մակարդակներում՝

- կառավարման վերին օղակ, վարչակազմ,
- դեկաններ և ամբիոնների վարիչներ,
- ուսումնական վարչություն:

«Կառավարում» ծրագրի շրջանակներում 2017 թվականի մայիսի 29-31-ը կկայանա ՀՀ և Գերմանական հավատարմագրման գործակալությունների կողմից իրականացվող ԵԳՊԱ-ի համատեղ ինստիտուցիոնալ հավատարմագրման հիմնական փուլը՝ փորձագիտական խմբի

այցը: Հավատարմագրման գործընթացը հաջողությամբ ավարտելու դեպքում ԵԳՊԱ-ն կստանա և՝ ՀՀ «Որակի ապահովման ազգային կենտրոնի» և՝ Գերմանիայի «ԱՍԻԻՆ» հավատարմագրման գործակալության հավատարմագրումները: Դա կարևորագույն նվաճում կլինի, քանզի դրա արդյունքում կապահովվի ԵԳՊԱ-ի կրթության ճանաչումը ՀՀ-ում և Եվրոպայում:

Կառավարման համակարգի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով 2015-2016 թվականների ընթացքում մշակվել և 2017 թվականից ներդրվելու է «ԵԳՊԱ կառավարման տեղեկատվական (էլեկտրոնային) համակարգը, որը տեղեկատվության հավաքագրման հուսալի միջոց է: Այս համակարգի շնորհիվ կատարվող վերլուծությունները կարող են հիմք հանդիսանալ ճիշտ ժամանակին հավաքագրված և արժանահավատ տվյալների հիման վրա որոշումներ կայացնելու համար:

Ստեղծվել և կիրարկվում է ԵԳՊԱ շրջանավարտների և գործատուների միջև կապի ձևավորման և ապահովման էլեկտրոնային հարդակը, որի բազայում արդեն իսկ գրանցված են 2013-2014 ուսումնական տարվա շրջանավարտների 97% (238 շրջանավարտ), 2014-2015 ուսումնական տարվա շրջանավարտների 84% (140 շրջանավարտ) և 2015-2016 ուսումնական տարվա շրջանավարտների 80% (158 շրջանավարտ և գրանցումը դեռ շարունակվում է):

Ակտիվ աշխատանքներ են շարունակվում դրամաշնորհային ծրագրերի ուղղությամբ՝ միտված անձնակազմի ներուժի զարգացմանը: 2016 թվականի դրությամբ ԵԳՊԱ-ն մասնակցել է Տեմպուսի և Էրազմուսպլուսի յոթ ծրագրերի, որոնցից երկուսի (ԿԱՌԱՎԱՐՈՒՄ և ԻՆՔԼՈՒԺՆ) ղեկավարն է հանդիսանում: Դրանք են.

- **ՏԵՄՊՈՒՍ - ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (GOVERN).** միտված է Բոլոնիայի սկզբունքներին համապատասխան բուհերի կառավարման համակարգի վերանայմանը: 2016 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում ԵԳՊԱ-ի Որակի ապահովման կենտրոնի, մարդկային ռեսուրսների բաժնի և դեկանատների համար ձեռք են բերվել հետևյալ սարքավորումները.

N	Սարքավորման տեսակը	Թիվը
1	Համակարգիչ	7

2	Սերվեր	1
3	Հոսանքի անխափան սնուցման սարք (UPS)	5

- **ՏԵՄՊՈՒՍ - ՊԻԿԱՍԱ (PICASA).** միտված է բուհի տարբեր գործընթացների միջազգայնացմանը: 2016 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում Թբիլիսիում տեղի է ունեցել գիտաժողով, որին 2 զեկուցումով մասնակցել են ԵԳՊԱ ուսումնական վարչության և միջազգային կապերի բաժնի 3 աշխատակից: 2017 թվականի սկզբին ծրագրի շրջանակներում ԵԳՊԱ-ի միջազգային կապերի բաժնի համար նախատեսվում է ձեռք բերել հետևյալ սարքավորումները.

N	Սարքավորման տեսակը	Թիվը
1	Համակարգիչ	7
2	Հոսանքի անխափան սնուցման սարք (UPS)	5

- **ՏԵՄՊՈՒՍ - ՎԵՐԻՏԱՍ (VERITAS).** միտված է Զալցբուրգի սկզբունքների հիման վրա Որակավորումների ազգային շրջանակ-ի 8-րդ մակարդակի (հետազոտող) կառուցվածքային զարգացմանը: 2016 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում ԵԳՊԱ-ի հետազոտական կենտրոնի և գրադարանի համար ձեռք են բերվել հետևյալ սարքավորումները.

N	Սարքավորման տեսակը	Թիվը
1	Համակարգիչ	5
2	Դյուրակիր համակարգիչ (Laptop)	1
3	Հոսանքի անխափան սնուցման սարք (UPS)	5

- **ՏԵՄՊՈՒՍ - ԸԼԱՅՆ (ALIGN).** միտված է մասնագիտության կրթական ծրագրերի և որակավորումների ազգային շրջանակների միջև համապատասխանության խթանմանը: 2016 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում ԵԳՊԱ-ի ուսումնական վարչության համար ձեռք են բերվել հետևյալ սարքավորումները.

N	Սարքավորման տեսակը	Թիվը
1	Համակարգիչ	5

2	Դյուրակիր համակարգիչ (Laptop)	1
3	Հոսանքի անխափան սնուցման սարք (UPS)	6

- **ՏԵՄՊՈՒՍ - ԷՍՊԱՔ (ESPAQ).** միտված է ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացներում ուսանողների ներգրավվածության բարձրացմանը: 2016 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում ԵԳՊԱ-ի 3 ուսանողներ ուսումնական այցով մեկնել են Մադրիդի Լա Ռիոխայի համալսարան, որտեղ ուսանողները ծանոթացել են որակի ապահովման գործընթացի իսպանական մոդելին: 2017 թվականի սկզբին ծրագրի շրջանակներում ԵԳՊԱ-ի ուսումնական վարչությանը կից գործող «ուսանողական համայնքի» համար համար նախատեսվում է ձեռք են բերվել հետևյալ սարքավորումները.

N	Սարքավորման տեսակը	Թիվը
1	Դյուրակիր համակարգիչ (Laptop)	8

- **ԷՐԱԶՄՈՒՍՊԼՈՒՍ - ԻՆՔԼՈՒԺՆ (INCLUSION).** նպատակ ունի նպաստել ներառական կրթության քաղաքականության մշակմանն ու իրականացմանը: Ծրագրի մեկնարկային հանդիպումը տեղի ունեցավ Հայաստանում դեկտեմբերի 1-ին և 2-ին:

- **ԷՐԱԶՄՈՒՍՊԼՈՒՍ - ՄՅՈԱ (C3QA).** միտված է եվրոպական պահանջներին համապատասխանող բարձրագույն կրթության 3-րդ աստիճանի կրթական ծրագրերի որակի ապահովման համակարգի ստեղծմանը:

Ինչպես երևում է, Տեմպուսի բոլոր վեց ծրագրերը միտված են բուհի տարբեր ոլորտներում կառավարման զարգացմանը և բարեփոխումների խթանման համար լավագույն միջոց են:

ՆՊԱՏԱԿ I. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ա. Ուսանողների վիճակագրական տվյալներ

2016-2017 ուսումնական տարվա բակալավրի կրթական ծրագրով ընդունելությունը իրականացվել է ըստ ԵԳՊԱ-ի մասնագետների կողմից մշակված և ՀՀ ԿԳ նախարարի կողմից հաստատված առաջադրանքների և գնահատման չափանիշների, որոնք հասանելի են ԵԳՊԱ-ի պաշտոնական կայքէջում: Մագիստրոսի կրթական ծրագրով 2016-2017 ուսումնական տարվա ընդունելությունը իրականացվել է ըստ «ԵԳՊԱ մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության քննությունների անցկացման կարգ»-ի: Դիմորդների բաշխումը ըստ մասնաճյուղերի հետևյալն է՝

Բակալավրի կրթական ծրագիր

Երևան	172
Գյումրի	31
Դիլիջան	4
Ընդամենը	**207**

Մագիստրոսի կրթական ծրագիր

Երևան	24
Գյումրի	8
Ընդամենը	**32**

Մրցույթի արդյունքում 2016-2017 ուսումնական տարվա ընդունելության տվյալները հետևյալն են՝

Բակալավրի կրթական ծրագիր

	պետ. պատվեր	Վճարովի	Ընդամենը
Երևան	39	122	161
Գյումրի	10	21	31
Դիլիջան	3	1	4
Ընդամենը	**52**	**144**	**196**

Մագիստրոսի կրթական ծրագիր

	պետ. պատվեր	Վճարովի	Ընդամենը
Երևան	14	10	24
Գյումրի	4	4	8
Ընդամենը	**18**	**14**	**32**

2016 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ ԵԳՊԱ-ի ուսանողների ընդհանուր թիվը.

Բակալավրի կրթական ծրագիր

	պետ. պատվեր	Վճարովի	Ընդամենը
Երևան	180	433	613
Գյումրի	48	88	136
Դիլիջան	14	6	20
Ընդամենը	**242**	**527**	**769**

Մագիստրոսի կրթական ծրագիր

	պետ. պատվեր	Վճարովի	Ընդամենը

Երևան	37	30	67
Գյումրի	7	6	13
Ընդամենը	**44**	**36**	**80**

Վերջին երեք տարիների վիճակագրական պատկերը հետևյալն է.

Դիմորդների և ընդունվածների բաշխումը ըստ մասնաճյուղերի և ուսումնական տարիների

Բակալավրի կրթական ծրագիր						
	2014-2015		**2015-2016**		**2016-2017**	
	դիմած	**ընդունված**	**դիմած**	**ընդունված**	**Դիմած**	**ընդունված**
Երևան	157	142	147	138	172	161
Գյումրի	45	42	35	35	31	31
Դիլիջան	7	6	7	6	4	4
Ընդամենը	***209***	***190***	***189***	***179***	***207***	***196***

Մագիստրոսի կրթական ծրագիր						
	2014-2015		**2015-2016**		**2016-2017**	
	դիմած	**ընդունված**	**դիմած**	**ընդունված**	**Դիմած**	**ընդունված**
Երևան	99	58	52	36	46	32
Գյումրի	5	5	5	5	8	8
Ընդամենը	***104***	***63***	***57***	***41***	***54***	***40***

Ուսանողների ընդհանուր թիվը ըստ մասնաճյուղերի և ըստ կարգավիճակի (պետ. պատվեր / վճարովի)

Բակալավրի կրթական ծրագիր									
	2014-2015			2015-2016			2016-2017		
	պետ. պատվեր	վճարովի	ընդամենը	պետ. պատվեր	վճարովի	ընդամենը	պետ. պատվեր	վճարովի	Ընդամենը
Երևան	196	374	570	182	412	594	180	433	613
Գյումրի	43	92	135	47	106	153	48	88	136
Դիլիջան	13	8	21	15	6	21	14	6	20
Ընդամենը	***252***	***474***	***726***	***244***	***524***	***768***	***242***	***527***	***769***

Մագիստրոսի կրթական ծրագիր									
	2014-2015			2015-2016			2016-2017		
	պետ. պատվեր	վճարովի	ընդամենը	պետ. պատվեր	վճարովի	ընդամենը	պետ. պատվեր	վճարովի	Ընդամենը
Երևան	42	81	123	38	49	87	37	30	67
Գյումրի	4	8	12	5	5	10	7	6	13
Ընդամենը	***46***	***89***	***135***	***43***	***54***	***97***	***44***	***36***	***80***

ԵԳՊԱ-ի ընդհանուր ուսանողների թիվը ըստ մասնաճյուղերի

	2014-2015	2015-2016	2016-2017
Երևան	693	681	680
Գյումրի	147	163	149
Դիլիջան	21	21	20
Ընդամենը	***861***	***865***	***849***

Բ. Ուսումնական գործընթաց

Անդրադառնալով ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը՝ հարկ է նշել, որ զգալի աշխատանքներ են տարվել մասնագիտության կրթական ծրագրերի արդիականացման ուղղությամբ: Հատկապես.

- ՏԵՄՊՈՒՍԻ «Մասնագիտության կրթական ծրագրերի և որակավորումների ազգային շրջանակների միջև համապատասխանության ապահովում և ստուգում (ALIGN)» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ԵԳՊԱ-ի, Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, Երևանի Հերացու անվան պետական բժշկական համալսարանի և ՈԱԱԿ-ի մասնագետներից կազմված աշխատանքային խմբի կողմից մշակվել է «ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՀՀ ՈԱՇ-Ի ՄԻՋԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ»-ը: Փաստաթուղթը մշակվել է որպես ազգային ուղեցույց և ուղղված է ՀՀ բարձրագույն կրթության տարածքին: Ուղեցույցը ներառում է ՄԿԾ-ների և ՈԱՇ-ի համապատասխանեցման համաշխարհային փորձի ամփոփումը, իրականացման հիմնական սկզբունքները ու գործիքակազմը:
- Մշակվել և 2017 թվականից ներդրվելու է «ՄԿԾ-ների մշակման և վերանայման ձեռնարկ»-ը: Ձեռնարկն ուղղված է Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում (ԵԳՊԱ) մասնագիտության կրթական ծրագրեր և առանձին դասընթացներ մշակող մասնագիտական խմբերին ու առանձին դասախոսներին: «ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՀՀ ՈԱՇ-Ի ՄԻՋԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ»-ի և ԵԳՊԱ գնահատման հայեցակարգի հետ միասին ձեռնարկը նպատակ ունի համակարգել ԵԳՊԱ-ում իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերի (ՄԿԾ) և ՀՀ որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) ու արտաքին շահակիցների պահանջների համապատասխանեցման գործընթացը, ինչպես նաև երաշխավորել ԵԳՊԱ-ում մշակվող նոր ՄԿԾ-ների համապատասխանեցվածությունը, որակը և միջազգայնացումը: Ձեռնարկը ներառում է ԵԳՊԱ-ում նոր ՄԿԾ-ների մշակման և գործող ՄԿԾ-ների վերանայման ընթացակարգը և ՀՀ ՈԱՇ-ին ու մասնագիտական ոլորտի հիմնական շահակիցների կարիքներին կրթական ծրագրերի համապատասխանեցման գործիքները:

- Իռլանդիայի «Արվեստի, դիզայնի և տեխնոլոգիայի ինստիտուտ»-ից ժամանած փորձագետների դիտողությունների հիման վրա վերանայվեցին մասնագիտության նկարագրերի և առարկայական ծրագրերի ձևաչափերը: «Դիզայն» և «Համակարգչային գրաֆիկա» մասնագիտությունները վերանայվեցին՝ համապատասխանեցվելով նոր ձևաչափերին:
- «Դիզայն» և «Համակարգչային գրաֆիկա» ՄԿԾ-ների վերաբերյալ կատարվեցին ինքնավերլուծություններ, որոնց արդյունքում ստացված զեկույցները ներկայացվեցին Տեմպուսի «ԸԼԱՅՆ» ծրագրի շրջանակներում ձևավորված միջազգային փորձագիտական խմբին: Փորձագիտական խմբում ընդգրկված էին Բարձրագույն կրթության որակի ապահովման կենտրոնների կենտրոնական և արևելյան եվրոպական ցանցի տնօրեն Իրինգ Վասերը, Լյուվենի համալսարանի պրոֆեսոր Անդրե Գովաերթը, Պոզնանի Ադամ Միկիևիչի համալսարանի պրոֆեսոր Զբիգնիև Պալկան, Դուբլինի Արվեստի, Դիզայնի և տեխնոլոգիաների ինստիտուտի պրոֆեսոր Դեյվիդ Քուինը և Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամի տնօրեն Ռուբեն Թոփչյանը: Փորձագիտական խումբը ինքնավերլուծության զեկույցը և ՄԿԾ-ները ուսումնասիրելուց հետո այցով ժամանեց ԵԳՊԱ: Այցի ընթացքում փորձագիտական խումբը հանդիպումներ ունեցավ ինքնավերլուծության զեկույցը պատրաստած խմբի, որակի ապահովման կենտրոնի աշխատակազմի, ինչպես նաև «Դիզայն» և «Համակարգչային գրաֆիկա» մասնագիտությունների դասախոսների, ուսանողների, շրջանավարտների հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվեցին ՄԿԾ-ների և դրանց իրականացման հետ կապված բազմաբնույթ խնդիրներ և մոտեցումներ: Ընդհանրացնելով ինքնավերլուծության զեկույցում ներկայացված և այցի ընթացքում ստացված տեղեկատվությունը՝ փորձագիտական խումբը կարճ զեկույցներ կազմեց նշված ՄԿԾ-ների արդյունավետության և արդի միջազգային պահանջներին համապատասխանելու վերաբերյալ: 2017 թվականի ընթացքում քայլեր կձեռնարկվեն փորձագետների զեկույցներում՝ որպես ՄԿԾ-ների թույլ կողմ նշված խնդիրները վերացնելու ուղղությամբ:
- Կատարվել են ԵԳՊԱ ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստումներ՝ կրթական ծրագրերի և ուսումնառության արդյունքների մշակման վերաբերյալ:

- Հիմք ընդունելով ուսումնառության արդյունքների հիման վրա վերանայված մասնագիտական կրթական ծրագրերը և գնահատման համակարգը՝ մշակվել և տպագրվել է 2016-2017 ուսումնական տարվա ուսանողի ձեռնարկը:

Գ. Ուսումնական միջավայրի բարելավում

- Ձևավորվել է համակարգչային գրաֆիկա մասնագիտության երկրորդ լաբորատորիան, որը համալրվել է 8 հզոր համակարգիչներով և պրոյեկտորով:
- Կերպարվեստի ֆակուլտետի համակարգչային լաբորատորիան համալրվել է 7 համակարգիչներով և պրոյեկտորով:
- Մեկնարկել է ԵԳՊԱ մեծ դահլիճի վերանորոգման գործընթացը, սկսած 2017 թվականից ԵԳՊԱ-ի ուսանողների դիպլոմային աշխատանքների պաշտպանությունները, կոնֆերանսները և բոլոր այլ միջոցառումները կկազմակերպվեն ԵԳՊԱ-ի նոր դահլիճում:

Դ. Որակավորումներ

2015-2016 ուսումնական տարում Երևանի գեղարվեստի պետական ակադեմիան, Գյումրու և Դիլիջանի մասնաճյուղերը ավարտել են 245 շրջանավարտ, որոնցից 192-ը բակալավրի կրթական աստիճանով և 53-ը՝ մագիստրոսի կրթական աստիճանով: Պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովները գրանցել են ԵԳՊԱ-ի շրջանավարտների բավական բարձր մակարդակը, ինչը արտահայտվում է ավարտական ատեստավորման արդյունքներով.

Բակալավրի կրթական աստիճան

Մասնագիտությունը	**Ուսանողների ընդհանուր թիվը**	**Գնահատականը***						
		A	**B**	**C**	**D**	**E**	**FX**	**W**

Դիզայն	36	21	12	3	-	-	-	-
Հագուստի մոդելավորում	31	19	12	-	-	-	-	-
Համակարգչային գեղարվեստական նախագծում	22	12	10	-	-	-	-	-
Կիրառական արվեստ	5	3	2	-	-	-	-	-
Քանդակագործություն	10	4	5	1	-	-	-	-
Գեղանկար	18	9	9	-	-	-	-	-
Գրաֆիկա	13	10	3	-	-	-	-	-
Կերպարվեստի պատմություն և տեսություն	8	6	2	-	-	-	-	-
Ընդամենը	**143**	**84**	**55**	**4**	-	-	-	-
Գյումրու մասնաճյուղ								
Դիզայն	4	1	2	1	-	-	-	-
Հագուստի մոդելավորում	10	7	2	1	-	-	-	-
Կիրառական արվեստ	2	2	-	-	-	-	-	-
Քանդակագործություն	5	5	-	-	-	-	-	-
Գեղանկարչություն	9	9	-	-	-	-	-	-
Գրաֆիկա	9	6	3	-	-	-	-	-
Կերպարվեստի պատմություն և տեսություն	4	2	1	-	-	1	-	-
Ընդամենը	**43**	**32**	**8**	**2**	**-**	**1**	**-**	**-**
Դիլիջանի մասնաճյուղ								
Կիրառական արվեստ	6	6	-	-	-	-	-	-
Ընդամենը	**6**	**6**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**
Ընդամենը	***103***	***122***	***63***	***6***	***-***	***1***	***-***	***-***

Մագիստրոսի կրթական աստիճան

Մասնագիտությունը	**Ուսանողների ընդհանուր թիվը**	**Գնահատականը***						
		A	**B**	**C**	**D**	**E**	**FX**	**W**

Դիզայն	5	4	1	-	-	-	-	-
Հագուստի մոդելավորում	9	5	4	-	-	-	-	-
Համակարգչային գեղարվեստական նախագծում	6	2	4	-	-	-	-	-
Կիրառական արվեստ	5	4	1	-	-	-	-	-
Քանդակագործություն	6	4	2	-	-	-	-	-
Գեղանկարչություն	5	3	2	-	-	-	-	-
Գրաֆիկա	7	5	2	-	-	-	-	-
Կերպարվեստի պատմություն և տեսություն	5	4	1	-	-	-	-	-
Ընդամենը	**48**	**31**	**17**	**-**	**-**	**-**	**-**	**-**
Գյումրու մասնաճյուղ								
Գեղանկարչություն	4	4	-	-	-	-	-	-
Գրաֆիկա	1	1	-	-	-	-	-	-
Ընդամենը	**5**	**5**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**
Ընդամենը	***53***	***36***	***17***	**-**	**-**	**-**	**-**	**-**

* Անցողիկ գնահատականներ՝ A (90%-100%), B (80%-89%), C (70%-79%), D (65%-69%), E (60%-64%): Անբավարար՝ FX (մինչև 59%): Չներկայացած՝ W:





Իրականացվող մասնագիտությունները Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) պահանջներին համապատասխանեցնելու նպատակով ԵԳՊԱ-ում շարունակում են գործել մասնագիտությունների կրթական ծրագրերը վերանայող հանձնախմբեր, որոնք զբաղվում են ուսումնառության վերջնարդյունքների մշակմամբ: Այդ հանձնախմբերի աշխատանքների շրջանակը ենթադրում է ՄԿԾ-ների վերանայում և շուկայի պահանջներին ու ՈԱՇ-ին համապատասխանեցում: Այդպիսի մոտեցումը կերաշխավորի ԵԳՊԱ-ի և մասնաճյուղերի կողմից առաջարկվող մասնագիտությունների ուսումնառության վերջնարդյունքների համապատասխանեցումը ՈԱՇ-ին, ինչը դյուրին կդարձնի բուհի ինտեգրումը Բարձրագույն կրթության Եվրոպական տարածքին:

Դ. Լրացուցիչ ծառայություններ

Երևանի գեղարվեստի պետական ակադեմիան հիմնական կրթական ծրագրերից զատ իրականացնում է նախապատրաստական դասընթացներ՝ ապագա դիմորդների և բոլոր այն քաղաքացիների համար, ովքեր ցանկություն ունեն գիտելիքներ և հմտություններ ձեռք բերել կերպարվեստի, կիրառական արվեստի և դիզայնի ոլորտներում: 2016 թվականի ընթացքում նախապատրաստական դասընթացներում ներգրավված են եղել շուրջ 60 մասնակից:

Հիմնական կրթական ծրագրից բացի ԵԳՊԱ-ի ուսանողների համար կազմակերպվում են նաև անվճար ֆակուլտատիվ դասընթացներ անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, իտալերեն, իսկ օտարերկրյա ուսանողների համար՝ նաև հայերեն լեզուներով: Ֆակուլտատիվ դասընթացներում 2016 թվականի ընթացքում ներգրավված են եղել շուրջ 185 ուսանող:

ՆՊԱՏԱԿ II. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի կողմից իրականացվող գործընթացները արդյունավետ կատարելու և առաջին հերթին որակյալ կրթություն տրամադրելու նպատակով ԵԳՊԱ-ում շարունակվում է որակի ապահովման համակարգի մշակումը և ներդրումը: Փորձարկումների փուլում է գտնվում «Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի որակի ապահովման ուղեցույց»-ի նախագիծը, որում ներառված են ԵԳՊԱ-ի որակի ապահովման

քաղաքականությունը, ոլորտները, ինչպես նաև որակի ապահովման ներքին և արտաքին գործընթացներն ու գործիքները: ԵԳՊԱ-ի որակը բարելավելու նպատակով գործում են ինքնավերլուծություն իրականացնող խմբեր, որոնք ինքնավերլուծության գործընթացներ են սկսել համաձայն Գերմանիայի ԱՍԻԻՆ հավատարմագրման կենտրոնի և ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի № 959-Ն որոշմամբ հաստատված «Ենթակառուցվածքային հավատարմագրման չափանիշներ»-ի: Ինքնավերլուծության զեկույցները կվերջնականացվեն 2017 թվականի փետրվարին և կներկայացվեն ՀՀ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն և Գերմանիայի «ԱՍԻԻՆ» հավատարմագրման գործակալություն՝ համատեղ հավատարմագրում իրականացնելու նպատակով:

Ինքնավերլուծության աշխատանքներն արդյունավետ և հավաստի իրականացնելու նպատակով 2016 թվականի ընթացքում որակի ապահովման կենտրոնն անցկացրել է մի շարք հարցումներ՝ շահակիցների շրջանում ակադեմիայի աշխատանքների արդյունավետությունը գնահատելու համար: Մասնավորապես.

- «Կոմպոզիցիա» և «Ստեղծագործության վերլուծություն» դասընթացի դասավանդման մեթոդների գնահատում:
- Կրթությունը ԵԳՊԱ-ու շարունակելու դրդապատճառների գնահատում (3-րդ, 4-րդ կուրսի ուսանողների շրջանում ESPAQ ծրագրի շրջանակներում ուսումնամեթոդական մասի հետ համատեղ):
- ԵԳՊԱ-ի վերաբերյալ դիմորդների տեղեկացվածության և տեղեկության տարածման միջոցների արդյունավետության գնահատում:
- Ընդունելության քննությունների անցկացման արդյունավետության գնահատում:

ՆՊԱՏԱԿ III. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության ոլորտում հաշվետու տարվա ընթացքում կատարվել են բավական լուրջ աշխատանքներ: ԵԳՊԱ-ի դասախոսների կողմից հայաստանյան և միջազգային գիտական ժողովածուներում և հանդեսներում հրատարակել են շուրջ 80 գիտական հոդվածներ, հրատարակվել է 3 մենագրություն, 12 ուսումնամեթոդական ձեռնարկ: Կազմվել և տպագրության ընթացքում է ԵԳՊԱ-ի «Տարեգիրք» արվեստագիտական և հումանիտար հետազոտությունների

հերթական ժողովածուն, որում ընդգրկված են 22 գիտական հոդվածներ, այդ թվում՝ 2 ասպիրանտի և 2 մագիստրոսի:

Ակադեմիան 2014 թվականից մասնակցում է ՏԵՄՊՈՒՍ-ի VERITAS «Զալցբուրգի սկզբունքների հիման վրա կրթական 3-րդ մակարդակի կառուցվածքային զարգացում» դրամաշնորհային ծրագրին: Ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանի հետբուհական կրթական համակարգը՝ այն համապատասխանեցնելով եվրոպական որակավորումների շրջանակին և Զալցբուրգյան սկզբունքներին: Ծրագրում ներգրավված են շուրջ 20 բարձրագույն ուսումնական հաստատություններ և կրթական կառույցներ ինչպես Հայաստանից, այնպես էլ եվրոպական մի շարք երկրներից: Ծրագրի շրջանակներում այս տարվա ընթացքում մշակվել եւ գրվել է ԵԳՊԱ արվեստի պատմության, կերպարվեստի, դիզայնի եւ կիրառական արվեստի հետազոտության համար նոր ասպիրանտական ծրագիրը, որն ընդգրկում է ա. ընդունելության պայմանների եւ պահանջների, բ. հետազոտության ընթացքի, գ. ղեկավարի, ուսանողի եւ բուհի փոխադարձ հարաբերությունների եւ պարտավորությունների, դ. ավարտական փուլի եւ ատենախոսության պաշտպանության գործընթացի շուրջ համակողմանի, բարենորոգված ու ըստ միջազգային չափանիշների մշակված դրույթներ, ինչպես նաեւ ըստ նոր ծրագրի կազմված եւ մշակված ուսումնական պլան: Արվեստի ոլորտում հետազոտություն կատարելու եւ թեկնածուական ատենախոսությունը այդ նախագծի շուրջ պաշտպանելու հնարավորության ընձեռնման առումով այս ծրագիրը հեղինակային աշխատանք է եւ միանգամայն նորույթ Հայաստանում: Ծրագրի ընդունման եւ հաստատման դեպքում այն կարող է օրինակ ծառայել արվեստի մյուս բուհերի համար: Վերիտաս ծրագրի շրջանակներում կատարվել է նաեւ ընթացիկ SWOT վերլուծություն:

ԵԳՊԱ հետազոտական կենտրոնի կողմից կազմակերպվել են թվով 9 դասախոսություններ, զեկուցում-քննարկումներ եւ շնորհանդեսներ՝ «Հանդիպումներ» եւ “Ճանաչողական ճամփորդություններ” շարքերի շրջանակներում, որոնց մասնակցել են ԵԳՊԱ դասախոսները եւ ուսանողները, ինչպես նաեւ հրավիրված մասնագետներ (3 ուսանող, 2 դասախոս, 4 հրավիրյալ մասնագետ):

Ակադեմիան մշակույթի ոլորտում միջազգային կապեր է հաստատել ինչպես առանձին մասնագետների, այնպես էլ հետազոտական մի քանի կենտրոնների հետ: Մասնավորապես, ընթացքի մեջ է Իտալիայի Բոլոնիայի համալսարանի Պատմության, մշակույթի եւ քաղաքակրթությունների պատմության ֆակուլտետի, Սորբոնի EPHE դպրոցի բյուզանդական արվեստի ամբիոնի եւ Չեխիայի Մազարիկի համալսարանի արվեստի պատմության ֆակուլտետի հետ երկկողմանի հարաբերությունների հաստատման գործընթացը: Կապ է հաստատվել Իտալիայի Վիտերբո քաղաքի համալսարանի արվեստի պատմության պրոֆեսոր Մարիա Ռաֆաելլա Մեննայի հետ, որը հետազոտական կենտրոնի տնօրենի հրավերով այցելել է ակադեմիա: Հետազոտական կենտրոնի տնօրենի, Ֆրանսիայի Էքս-են-Պրովանս համալսարանի հայ արվեստի և ճարտարապետության ամբիոնի, Միջերկրածովյան միջնադարյան հնագիտության լաբորատորիայի տնօրինության հետ համատեղ, նոյեմբերի 24-ին Էքսում կայացել է հանդիպում, որի ընթացքում քննարկվել եւ կոնկրետացվել են միջազգային հնագիտական-արվեստաբանական ուսումնա-հետազոտական ծրագրի թեման, կառուցվածքը, ուղղվածությունը, ֆինանսական միջոցների աղբյուրը, գործընկերների շրջանակը:

Հետազոտական կենտրոնի վարած բանակցությունների արդյունքում ֆրանսիական MUSCARI հիմնադրամը ֆինանսավորելու է ԵԳՊԱ տարեգրքի նոր՝ 2016թ. համարի հրատարակությունը:

Կենտրոնի տնօրենը հրավիրյալ դասախոսի կարգավիճակով ապրիլին չորս սեմինար դասախոսություններ է անցկացրել Բոլոնիայի համալսարանում, բացի այդ, տարվա ընթացքում մասնակցել է յոթ միջազգային եւ հանրապետական գիտաժողովների:

Հետազոտական կենտրոնը 2014թ մասնակցում է ամերիկյան հայտնի Պոլ Գետտի հիմնադրամի ֆինանսավորած Connecting Art Histories միջազգային նախագծին, որի շրջանակներույմ այս տարի երկու հետազոտական-ուսումնական ճամփորդություն է կատարվել՝ Թուրքիա եւ Հայաստան:

Արդեն 3-րդ տարին է ինչ «Աշխարհայացքների պատմություն» եւ “Կինոգիտություն” առարկաների շրջանակներում ԵԳՊԱ է հրավիրվում և 1 ամբողջ կիսամյակի ընթացքում դասախոսություններ է կարդում Իտալիայի փիլիսոփայական գիտությունների դոկտոր,

արվեստագետ՝ Լեոնարդո Ֆիլաստոն: Այս տարի նա նաեւ ղեկավարում է մեկ բակալավրական ավարտական աշխատանք:

2016թ. ակադեմիայի 2 դասախոսի շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում, 4 դասախոսի՝ դոցենտի գիտական կոչում:

2016 թվականը արդյունավետ է եղել նաև երիտասարդ հետազոտողների համար: Հետազոտական կենտրոնի եւ գիտական մասի համատեղ կազմակերպմամբ ԵԳՊԱ երկու ասպիրանտ զեկուցում են կարդացել իրենց հետազոտական թեմաներով, որի ընթացքում ներկայացրել են թեմայի առաջընթացը, ծագած խնդիրները եւ ապագա անելիքները: Զեկուցումներն ավարտվել են քննարկմամբ:

Արվեստբանություն մասնագիտության 2 մագիստրոսներ զեկուցումներով հանդես են եկել Երևանի պետական համալսարանի և Ժողովրդական արվեստի թանգարանի կազմակերպած գիտական նստաշրջաններում: Ակադեմիայի 2 ասպիրանտներ մասնակցել են ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում և Մատենադարանում կազմակերպված երիտասարդ արվեստաբանների գիտաժողովների:

Արվեստաբանական բաժնի բոլոր կուրսերի ուսանողները ամբիոնի երաշխավորությամբ ներկա են եղել Սիրարփի Տեր Ներսեսյանին նվիրված գիտաժողովին:

Ակադեմիայի 2 ասպիրանտ (այդ թվում 1-ը՝ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի) հաջողությամբ պաշտպանել են թեկնածուական ատենախոսությունները և ՀՀ ԲՈՀ-ի կողմից նրանց շնորհվել է արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան:

Ներկայում ակադեմիայում սովորում է 4 ասպիրանտ և 3 հայցորդ:

ՆՊԱՏԱԿ IV. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐ

Ուսանողների շարժունությունը ապահովելու նպատակով հաստատվել է՝ «ԵԳՊԱ փոխանակման ծրագրերով արտասահմանյան գործընկեր բուհեր մեկնող ուսանողների շարժունության կարգ»-ը:

Համագործակցության նոր պայմանագրեր են կնքվել՝ Ֆրանսիայի Բըզանսոնի արվեստի և դիզայնի դպրոցի, Ստրասբուրգի Ռենի գեղարվեստի բարձրագույն դպրոցի և Իտալիայի Թուրինի դիզայնի ինստիտուտի հետ:

Ընդհանուր առմամբ, 2016-2017 ուսումնական տարվա արտասահմանցի ուսանողները կազմում են 6.6%, որից 3%-ը Ասիայից, 2.5%-ը՝ նախկին ԽՍՀՄ երկրներից, 0.4%-ը՝ Եվրոպայից և 0.7%-ը Չինաստանից:



Անդրադառնալով արտասահման մեկնող ուսանողներին՝ պետք է նշել, որ ուսանողների փոխանակումը հիմնականում ընթանում է Ֆրանսիական ուսումնական հաստատությունների (Մարսելի գեղարվեստի բարձրագույն դպրոց), Իտալիայի ուսումնական հաստատությունների (Պերուջիայի համալսարան) և Սանկտ-Պետերբուրգի Շտիգլիցի անվ. գեղարվեստա-արդյունաբերական ակադեմիայի հետ, գործող ուսանողների փոխանակման ծրագրի շրջանակներում: 2016-2017 ուսումնական տարվա 1-ին և 2-րդ կիսամյակներում, նշված համաձայնագրերի շրջանակներում, ուսումը շարունակելու նպատակով 1 ուսանող մեկնել է Մարսելի արվեստի և դիզայնի բարձրագույն դպրոց (Ֆրանսիա), 1-ը՝ Պերուջայի համալսարան և 1-ը՝ Պալացիո Սպինելլիի ռեստավրացիայի դպրոց (Իտալիա) և 4-ը՝ Սանկտ–Պետերբուրգի Շտիգլիցի անվան պետական գեղարվեստա-արդյունաբերական ակադեմիա (Ռուսաստան):

Փոխանակման ծրագրերով Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում մեկ կիսամյակ սովորել է Ֆրանսիայի Բըզանսոնի արվեստի և դիզայնի դպրոցի 1 ուսանող:

Միջազգային համագործակցությանը նպաստելու նպատակով 2016 թվականի դեկտեմբերի դրությամբ գործում են պայմանագրեր արվեստի օտարերկրյա 23 բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ, որոնք վերաբերվում են պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների փոխանակմանը, համատեղ թեմատիկ ցուցահանդեսների, համաժողովների, աշխատաժողովների կազմակերպմանը:

Կարևոր միջոցառումների թվին կարելի է դասել նաև արդեն ավանդական դարձած ճապոնացի արվեստագետ, պրոֆ. Կունիտո Նագաոկայի գլխավորությամբ կազմակերպված վորքշոփը և Նորադուզում կազմակերպված վարպետության դասընթացները՝ նվիրված խաչքարերի սիմվոլների պատճենահանման տեխնիկային:

ՆՊԱՏԱԿ V. ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ

Հասարակայնության հետ կապերի ոլորտում 2016 թվականի ընթացքում իրականացվել են ավելի քան 70 ցուցահանդեսներ ու միջոցառումներ՝ ԵԳՊԱ-ում, Գյումրու ու Դիլիջանի մասնաճյուղերում և այլ վայրերում: Դրանցից հատկապես կարևոր է նշել.

1. **Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի հիմնադրման 70-ամյա հոբելյանին** նվիրված գրքի հրատարակությունն ու դրա շնորհանդեսը:
2. **Արփենիկ Նալբանդյանի 100-ամյակին նվիրված «Կենսահաստատ վրձնումներ» խորագրով ցուցահանդեսը:** Ցուցահանդես և դրա հետ կապված տարբեր միջոցառումներ Ազգային պատկերասրահում:
3. **Սբ. Սարգիս զորավարի տոնին նվիրված մրցութային ցուցահանդեսը:** Արարատյան հայրապետական թեմի նախաձեռնությամբ կայացած ուսանողական ցուցահանդես ԵԳՊԱ-ի «Ալբեր և Թովէ Բոյաջյան» ցուցասրահում:
4. **«ԷՍՏԱՄՊ» գրաֆիկական աշխատանքների ցուցահանդեսը:** Գրաֆիկա մասնագիտության 2-րդ և 3-րդ կուրսերի ուսանողների ցուցահանդես ԵԳՊԱ-ի «Ալբեր և Թովէ Բոյաջյան» ցուցասրահում:
5. **«Մտահղացումից իրականացում» Գրիգոր Աղասյանի աշխատանքների ցուցահանդեսը** : Մեծ վարպետի ծննդյան 90-ամյակին նվիրված Հոբելյանական ցուցահանդես ԵԳՊԱ-ի «Ալբեր և Թովէ Բոյաջյան» ցուցասրահում:
6. **Հայաստանում Ֆրանկոֆոնիայի օրերին նվիրված ցուցահանդեսը:** Դասախոսների աշխատանքների ցուցահանդես ԵԳՊԱ-ի «Ալբեր և Թովէ Բոյաջյան» ցուցասրահում:
7. **«Վերապրում գույնի մեջ» Անատոլի Գրիգորյանի աշխատանքների ցուցահանդեսը:** Գեղանկարչության ամբիոնի վարիչ Անատոլի Գրիգորյանի հոբելյանական ցուցահանդեսը ԵԳՊԱ-ի «Ալբեր և Թովէ Բոյաջյան» ցուցասրահում:
8. **«Բարության ու խաղաղության պատգամը» երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված ցուցահանդեսը:** Երեխաների աշխատանքների ցուցահանդես ԵԳՊԱ-ի «Ալբեր և Թովէ Բոյաջյան» ցուցասրահում:
9. **«Դիլիջան» գեղանկարչական աշխատանքների ցուցահանդեսը:** Գեղանկար մասնագիտության առաջին կուրսի ուսանողների՝ Դիլիջանում անցկացրած պրակտիկայի ընթացքում կատարած աշխատանքների ցուցահանդեսը ԵԳՊԱ-ի «Ալբեր և Թովէ Բոյաջյան» ցուցասրահում:
10. **«Հայաստանի Հանրապետության անկախության 25 –ամյակին» նվիրված ցուցահանդեսը:** Գեղանկարչության ամբիոնի դասախոսների աշխատանքների ցուցահանդեսը ԵԳՊԱ-ի «Ալբեր և Թովէ Բոյաջյան» ցուցասրահում:

11. **«Իտալերեն լեզվի շաբաթ» ծրագրի շրջանակներում կազմակերպված «Իտալական մթնոլորտ՝ գեղարվեստի ակադեմիայում» խորագրով ցուցահանդեսը:** Իտալերեն սովորող ուսանողների աշխատանքների ցուցադրություն ԵԳՊԱ-ի «Ալբեր և Թովէ Բոյաջյան» ցուցասրահում:
12. **«Լույսի թափանցումներ՝ որպես աղոթք կամ խոստովանություն» Սարո Գալենցի աշխատանքների ցուցահանդեսը:** Գծանկարի և գունանկարի միասնական ամբիոնի վարիչ Սարո Գալենցի վերջին շրջանի աշխատանքների ցուցահանդեսը ԵԳՊԱ-ի «Ալբեր և Թովէ Բոյաջյան» ցուցասրահում:
13. **Ուսանողների անհատական ցուցահանդեսները:** Գրաֆիկա մասնագիտության բակալավրիատի 2-րդ կուրսի ուսանող Միսակ Հարթենյանի «Գունային զգայնություններ» և քանդակագործություն մասնագիտության մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Մանվել Մաթևոսյանի «Երկխոսություն» խորագրերով ցուցահանդեսները ԵԳՊԱ-ի «Ալբեր և Թովէ Բոյաջյան» ցուցասրահում:
14. **«Արվեստի բուհերի շաբաթ» ծրագրի շրջանահկներում կայացած միջոցառումները:** ԵԳՊԱ-ի, ԵՊԿ-ի և ԵԹԿՊԻ-ի համատեղ միջոցառումների շրջանակներում կայացած ցուցահանդեսներ և վարպետության դասեր:
15. **«Մի կտոր կրակ» ուսանողների աշխատանքների ցուցահանդեսը:** Հայաստանի երիտասարդական հիմնադրամի և Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի ուսանողական խորհրդի կողմից կազմակերպված ցուցահանդես Հայաստանի նկարիչների միությունում:

ԲՈՒՀԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2014 թվականից ՀՀ-ում ներդրվեց բուհերի ազգային վարկանիշավորման համակարգը, որի նպատակներն են.

- բարձրացնել բուհերի միջև մրցակցությունը և դրանց հաշվետվողականությունը;

- ընդլայնել բուհական համակարգի շահառուների՝ ուսանողների, դիմորդների, գործատուների և այլ սոցիալական խմբերի, բուհերի մասին բաց և թափանցիկ տեղեկատվություն ստանալու հնարավորությունները և բարձրացնել հասարակության իրազեկվածությունը կրթության որակի և կրթական գործընթացի արդյունավետության վերաբերյալ;
- բարձրացնել բարձրագույն կրթության ոլորտում քաղաքականության մշակման և որոշումների ընդունման արդյունավետությունը՝ նպաստելով բարձրագույն կրթության որակի բարձրացմանը:

Վարկանիշավորումը իրականացվում է ըստ բուհերի գործունեության հետևյալ ուղղությունների՝ ուսանողներ, ուսումնառության արդյունքներ, միջազգային ուղղվածություն, գիտահետազոտական աշխատանք, դասավանդման գործընթաց, հաստատության կարողություններ, աշխատանքային շուկա, հանրային կապեր:

ՀՀ բոլոր պետական և մասնավոր բուհերը բաժանվում են 6 խմբերի: Դրանք են՝

1. Երեք կրթական աստիճաններում և երեք ու ավել մասնագիտական ոլորտներում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր
2. Երեք կրթական աստիճաններում և մինչև երեք մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր
3. Բակալավրական ու մագիստրոսական և երեք ու ավել մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր
4. Բակալավրական և մագիստրոսական և մինչև երեք մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր
5. Միայն բակալավրական մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր
6. Արվեստի բուհեր

ԵԳՊԱ-ն հանդիսանալով ՀՀ կերպարվեստի ոլորտի առաջատար բուհ ընդգրկվել է 6-րդ վարկանիշային խմբում և վարկանիշավորման արդյունքներով, արդեն երկրորդ տարին է զբաղեցնում է 1-ին տեղը:

2016 թվականից սկսած կատարվում է նաև բուհերի ընդհանուր վարկանիշավորում, որտեղ միասնական չափանիշներով գնահատվում են բոլոր պետական և մասնավոր բուհերը՝ անկախ դրանցում իրականացվող կրթական աստիճանների և մասնագիտական ոլորտների թվից: Ընդհանուր վարկանիշում, որտեղ մասնակցել են ՀՀ-ում բարձրագույն կրթություն իրականացնող 55 հաստատություններ ԵԳՊԱ-ն զբաղեցրել է 13-րդ տողը: Հաշվի առնելով ակադեմիայի փոքր չափերը (տարածք, ֆինանսավորում, ուսանողների, պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի թիվաքանակ) դա շատ բարձր արդյունք է:

Նշված արդյունքները վկայում են վերջին տարիների գործունեության բարձր որակի և կրթության ոլորտում կատարված բարեփոխումների արդյունավետության մասին: Վարկանիշավորման չափանիշներին և արդյունքներին կարելի է ծանոթանալ Բուհերի ազգային վարկանիշավորման համակարգի պաշտոնական կայքէջերում՝ http://ranking.armedu.am/ և http://rank.armedu.am/:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հանդիսանալով պետական հաստատություն և ձևավորելով բյուջեն թե՛ պետական և թե՛ հասարակության կողմից տրամադրվող ֆինանսներից՝ ԵԳՊԱ-ն այդ ֆինանսները բաշխելիս հաշվետու է հասարակությանը և կառավարությանը:

2016 թվականին ԵԳՊԱ-ի եկամուտները ձևավորվել են պետ. բյուջեի հատկացումներից, ուսանողների վարձավճարներից և այլ մուտքերից: ԵԳՊԱ-ի ծախսերը կատարվում են ըստ նախահաշվի, որը կազմվում է՝ հիմք ընդունելով ամբիոններից ստացած պահանջագրերը: Հատուկ տողով գումար է հատկացվում ուսանողական խորհրդին՝ ցուցահանդեսների, քաղաքից դուրս էտյուդների կազմակերպման համար:

ՄՈՒՏՔԵՐ **639.290.332 ՀՀ դրամ**

1	Պետական բյուջե	258.555.200	40.4%
2	Ուսանողների վճարներ	227.851.300	35.7%
3	Նախապատրաստական դասընթացներ	14.055.000	2.2%
4	Միջազգային աղբյուրներից ստացված ֆինանսավորում	131.188.282	20.5%
5	Այլ մուտքեր	7.640.550	1.2%



ԾԱԽՍԵՐ **512.767.142 ՀՀ դրամ**

1	Աշխատավարձ	416.944.217	81.3%
2	Պետական հարկեր	5.455.295	1.1%
3	Գնումներ	19.849.513	3.9%
4	Ծառայություններ	49.660.000	9.7%
5	Գործուղում	2.968.917	0.6%
6	Կրթաթոշակ	14.053.700	2.7%
7	Այլ ծախսեր	3.835.500	0.7%



Ուսումնական գործընթացի արդյունավետությունն ապահովելու համար 2016 թվականին ԵԳՊԱ-ի մասնաշենքերում կատարվել են շենքի պահպանման աշխատանքներ, ԵԳՊԱ-ն

համալրվել է ուսումնական գույքով, ձեռք են բերվել սարքեր և սարքավորումներ, գրադարանը հագեցվել է մասնագիտական գրականությամբ:

Գյումրու մասնաճյուղի ֆինանսատնտեսական գործողությունները իրականացվում են համաձայն տարեկան պլանավորման՝ ըստ անհրաժեշտ, օգտակար և այլ ծախսերի: Այդ թվում անհրաժեշտ ծախսեր են՝ աշխատավարձերը և սոցիալական պարտավորությունները պետության և աշխատակիցների հանդեպ, ինչը կազմում է ընդհանուր բյուջեի 73%-ը, նաև պահանջվող գրասենյակային պարագաները, կոմունալ ծախսերի հատվածները: Առանձին կետով վճարումներ են կատարվում գույքի և սարքավորումների, տրանսպորտային, գործուղումների, ընթացիկ վերանորոգումների համար: Այս ամենը վկայում է, որ մասնաճյուղն իր ունեցած միջոցները ծախսում է դինամիկ համամասնությամբ, չնայած չի կարողանում իրականացնել զարգացման և հեռանկարային ծախսեր: Այս կարգի ծախսերի համար բուհը նախատեսում է ընդլայնել ու զարգացնել համագործակցական հովանավորչական և դրամաշնորհային ծրագրերն ու նախագծերը:

Միջազգային աղբյուրներից ստացված ֆինանսավորում

2016 թվականի ընթացքում Երևանի գեղարվեստի պետական ակադեմիան ֆինանսավորվել է նաև միջազգային աղբյուրից՝ Եվրոմիության «Տեմպուս» դրամաշնորհային ծրագրի սահմաններում:

ՄՈՒՏՔԵՐ **137.553.432 ՀՀ դրամ**

1	Տեմպուս	137.553.432	100%

ԵԳՊԱ-ում իրականացվող «ԳՈՎԵՌՆ», «ՎԵՐԻՏԱՍ», «ԸԼԱՅՆ», «ՊԻԿԱՍԱ» և «ԷՍՊԱՔ» Եվրոմիության ՏԵՄՊՈՒՍ դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում 2016 թվականի ընթացքում ֆինանսական մուտքերը և ծախսերը հետևյալն են.

ՄՈՒՏՔԵՐ 137.553.582 ՀՀ դրամ

1.	ԳՈՎԵՌՆ	128.749.432	93.6%
2.	ՎԵՐԻՏԱՍ	2.438.850	1.8%
3.	ԸԼԱՅՆ	6.365.300	4.6%



ԾԱԽՍԵՐ 24.931.686 ՀՀ դրամ

1.	ԳՈՎԵՌՆ	12.467.756

1.1	Աշխատավարձ	4.549.441	18.25%
1.2	Սարքավորումներ	7.823.315	31.39%
1.3	Տպագրություն	95.000	0.38%
2.	**ՎԵՐԻՏԱՍ**	**1.882.570**	
2.1	Ճանապարհածախս	324.501	1.3%
2.2	Աշխատավարձ	1.558.069	6.25%
3.	**ԸԼԱՅՆ**	**6.365.300**	
3.1	Սարքավորումներ	6.365.300	25.5%
4.	**ՊԻԿԱՍԱ**	**1.614.726**	
4.1	Ճանապարհածախս	1.614.726	6.49%
5.	**ԷՍՊԱՔ**	**2.601.334**	
5.1	Ճանապարհածախս	1.346.665	5.4%
5.2	Աշխատավարձ	1.254.669	5.04%



ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Այսպիսով, կարելի է նշել, որ 2016 թվականը եղել է բավականին արդյունավետ թե կառավարման համակարգի, և թե ուսումնական գործընթացի բարելավման տեսանկյունից: ԵԳՊԱ-ն բավականաչափ ներդրումներ է իրականացրել բուհի զարգացման ուղղությամբ:

Սակայն, բավականին լուրջ մարտահրավեր են առաջանում, երբ խոսքը գնում է միջազգային չափանիշներին համահունչ կրթության տրամադրմանը: Չնայած արտաքին աղբյուրներից ռեսուրսների ձեռքբերման հարցում ԵԳՊԱ-ի բոլոր ջանքերին՝ դեռ առկա են շոշափելի խնդիրներ հիմնականում հետևյալ հարցերում՝

- ԵԳՊԱ-ի ֆիզիկական տարածքի վերանորոգում և համապատասխան հարմարությունների ստեղծում,
- պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստում,
- շենքային պայմանների ընդլայնում:

Ամփոփելով՝ ԵԳՊԱ-ն միշտ պատրաստակամ է և անընդատ ձգտում է բարելավել ուսումնագիտական ծառայությունների որակը և կշարունակի աշխատել նշված մարտահրավերները հաղթահարելու ուղղությամբ: